«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՎ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՆԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Բասկետբոլ մարզաձևի պատմությունը, կանոնները և կիրառումը Հայաստանում
ԱՌԱՐԿԱ	Ֆիզկուլտուրա
ՀԵՂԻՆԱԿ	Խաչատրյան Փիրուզ Ժորայի
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ	Սևանի Վ. Կարապետյանի անվան N3 հիմնական դպրոց

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բասկետբոլը խաղ է երկու թիմերի միջև՝ հնգական խաղացողներով: Յուրաքանչյուր թիմի նպատակն է գնդակը նետել մրցակցի թիմի օղակը և խանգարել մյուս թիմին տիրապետել գնդակին և նետում կատարել այն սեփական օղակը: Գնդակի հսկողությունը իրագործվում է միայն ձեռքերով, թույլատրվում է գնդակը փոխանցել, նետել, վարել ցանկացած ուղղություններով:

Հետազոտական աշխատանքի ընթացքում ուշադրությունս կկենտրոնացնեմ մարզաձևի պատմությանը և Հայաստանում նրա կիրառությանը: Կխոսեմ բասկետբոլի ազգային և միջազգային ասպարեզներում մեծ ներդրում ունեցող հայ և հայաստանցի անվանի մարզիկների, մարզիչների և մրցավարների մասին, որոնց անունը ոսկե տառերով է գրված բասկետբոլի պատմության էջերում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բասկետբոլի ստեղծման պատմությունը

ԽԱՂԻ ՆԱԽԱՀԱՅՐԸ

Հին մայաներն այդ խաղը կոչում էին պոկ-տա-պոկ: Հնդկացիներն այն դիտում էին իբրև տիեզերքի «կրկնօրինակ». դաշտով գնդակի տեղաշարժը հիշեցնում էր տիեզերքում պտտվող արբանյակների հետագիծը: Թիմի նպատակն էր 4-կիլոգրամանոց կաուչուկե գնդակը գցել քարից պատրաստված և պատի վրա ուղղահայաց տեղադրված օղակի մեջ (տե՛ս նկարը): Ընդ որում, խաղացողները գնդակը պետք է հետ մղեն միայն ազդրերով, արմունկներով, ուսերով, նստատեղով կամ մեջքով: Հաղթող թիմն արժանանում էր այն ժամանակների համար պատվավոր մրցանակի. համարելով, որ խաղացողները նվաճել են վարպետության բարձունքները և հիման կարող են մրցել միայն աստվածների հետ, քրմերը զոհաբերում էին «երջանիկներին»:

Մեր օրերեում պոկ-տա-պոկի տարբերակը գոյատևում է Մեքսիկայի մի քանի հյուսիսային նահանգներում և կոչվում է ուլամա: Խաղը պահպանվել է իբրև մարզական

զվարճանք և հանդիսախաղ զբոսաշրջիկների համար: Իսկ հաղթողներին այլևս չեն ուղարկում մրցելու աստվածների հետ:

ԴԵՂՁԻ ԶԱՄԲՅՈՒՂՆԵՐ

1891թ. Մասաչուսեթս նահանգի Սփրինգֆիլդ քաղաքում կանադացի սովորական ուսուցիչ Ջեյմ Նեյսմիթը հորինեց մի պարզ խաղ, որտեղ խաղացողը կարող էր օգտագործել իր ֆիզիկական ընդունակություններն ու երևակայությունը: ԵՎ միայն մի քանի տասնամյակ անց բասկետբոլը հասավ մեծ ժողովրդականության՝ ամբողջ աշխարհում ձեռք բերելով միլիոնավոր երկրպագուներ:

Սփրինգֆիլդի դպրոցի երիտասարդ քրիստոնյաների միության (YMCA) ուսուցիչ, պրոֆեսոր Նեյսմիթը փաստորեն ստեղծեց նոր մարզաձև՝ դպրոցի աշխատակիցներից մեկին խնդրելով մարզադահլիճի պատերին դեմ առ դեմ ամրացնել դեղձերի համար նախատեսված երկու զամբյուղ:

Նեյսմիթը, իհարկե, չէր կարող կանխագուշակել Մայքլ Ջորդանի և Դոմինիկ Ուիլքինսի օդային պայքարը կամ պատկերացնել հազարավոր երկրպագուներով լցված ներկայիս մարզապալատները, որովհետև բասկետբոլն ստեղծել էր իր աշակերտների համար երկարատև ձմռան ընթացքում ինչ-որ զբաղվելու նպատակով:

Իսկ ի՞նչը դարձավ այդ խաղը ստեղծելու պատճառը: Ամերիկյան ֆուտբոլը, որն այն ժամանակ շատ տարածված էր, կոպիտ ու կոնտակտային մարզաձևն էր: Աշակերտները վնասվածքների պատճառով ստիպված էին լինելու երկար ժամանակով բացակայել դասերից:

Դպրոցի տնօրենը կարգադրեց ստեղծել մի խաղ, որը չունենար այդ թերությունները: Բացի այդ, Նեյսմիթը ենթադրեց, որ զամբյուղները բարձր տեղադրելուց առաջին հերթին ի հայտ կգան ճարպկությունը և շարժունակությունը, այլ ոչ կոպիտ ուժը: Բասկետբոլի ծննդյան օր է համարվում 1892թ. հունվարի 15-ը, երբ Նեյսմիթը դպրոցական թերթում հրապարակեց բասկետբոլի կանոնները:

ՄԵԿՆԱՐԿԸ ՏՐՎԱԾ Է

Բասկետբոլային պրոֆեսիոնալ առաջին մրցախաղը, ըստ երևույթին, տեղի է ունեցել 1896թ. Նյու Ջերսիի Թրենթոն քաղաքում: 1890-ականների կեսերին դոկտոր Նեյսմիթի

ստեղծած մարզաձևի սիրողական թիմերը հանդես էին գալիս ԱՄՆ-ի ողջ հյուսիս-արևելքի տարածքում: Նրանցից լավագույնը Թրենթոնի թիմն էր: Այդ և մյուս թիմերը խաղում էին YMCA-ի առաջնությունում:

Վարձակալած դահլիճների դիմաց թրենթոնցիները վճարում էին մուտքի տոմսերի վաճառքից ստացվող գումարից, իսկ գոյացած շահույթը կիսում էին մրցակիցների հետ: Այդպիսի համբավ ձեռք բերած թիմի խաղին ներկա էին լինում հազարավոր հանդիսականներ, որոնք էլ ապահովում էին որոշակի շահույթ: Յուրաքանչյուր խաղացողի հասնում էր 15 դոլար, սակայն եկամուտը բաժանելուց հետո առձեռն հասնում էր 1-ական դոլար: Քիչ ավելի էր վաստակում թրենթոնյան թիմի ավագ Ֆրեդ Կուպերը, որը դարձավ բասկետբոլի պատմության մեջ ամենաբարձր վարձատրվող առաջին խաղացողը:

Թրենթոնի թիմը խաղում էր ցանցով շրջապատված մարզահրապարակում, որը երկրպագուներին պաշտպանում էր խաղացողներից (և հակառակը): Ցանցը նպաստում էր նաև խաղի արագ ընթացքին, քանի որ ցանցից հետ մղված գնդակը մնում էր խաղի մեջ:

ԱՌԱՋԻՆ ԼԻԳԱՆԵՐԸ

Բասկետբոլի առաջին պրոֆեսիոնալ լիգան կազմավորվեց 1898.: Փառասեր կազմակերպիչների կողմից անվանակոչված Ազգային լիգան ամենևին էլ ազգային նշանակության չէր, քանի որ կազմված էր Ֆիլադելֆիայի անմիջական հարևանությամբ տեղակայված վեց թիմերից:

Թրենթոնի թիմը, որը մարզում էր Ֆրեդ Կուպերը, շահեց այդ լիգայի առաջին երկու առաջնությունները: Հինգ տարի գործելուց հետո այն լուծարվեց, և խաղացողներից շատերը հայտնվեցին Ֆիլադելֆիայի նոր լիգայում: Դա իր հերթին ծնեց Արևելյան լիգան և Կենտրոնական լիգան:

Վաղեմի լիգաները մշտական կյանք չունեին: Չկար ոչ մի պայմանագիր, որը խաղացողներին կապեր թիմի հետ, և նրանք հաճախ տեղափոխվում էին այն թիմեր, որտեղ շատ էին վճարում: Այդպիսի տեղափոխություններ լինում էին նաև որևէ խաղից առաջ, և առաջանում էր կազմերի հետ կապված իսկական խառնաշփոթ: Այդպիսին էր պրոֆեսիոնալ բասկետբոլի վիճակը մինչև 1920-ական թվականների սկիզբը:

ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ԼԻԳԱՆԵՐ

1920-ական թվականների սկզբին Ամերիկացի սևամորթներին արգելված էր հանդես գալ բասկետբոլային «սպիտակ» թիմերի կազմում կամ նրանց դեմ, թեպետ սիրողական բասկետբոլն այն ժամանակ արմատավորված էր հիմնականում Նյույորքյան «սև» Հառլեմում և ԱՄՆ-ի խոշոր քաղաքների ներգրական գետտոներում: Պրոֆեսիոնալ թիմերի ղեկավարները երկար ժամանակ ուշադրություն չէին դարձնում սևամորթ հսկա խաղացողների վրա, որոնք բնատուր ճկունության ու ցատկունության շնորհիվ ցուցադրում էին անհավանական տեխնիկա:

1922-ին Հառլեմում ստեղծվեց պրոֆեսիոնալ առաջին թիմը, որն ամբողջությամբ կազմված էր սևամորթ խաղացողներից. այն կոչվեց «Նյու Յորք ռենեսանս» (կամ պարզապես՝ «Ռենս»): Սևամորթ խաղացողները հեշտությամբ հաղթում էին ուսանողական թիմերին: Որոշ ժամանակ անց ԱՄՆ-ում ոչ ոք չէր համարձակվի պնդել, թե բասկետբոլը մարզաձև է «միայն սպիտակների համար»:

1930-ական թվականներին բուռն կերպով սկսեց զարգանալ ուսանողական բասկետբոլը, որին վիճակված էր դառնալու Բասկետբոլի ազգային ասոցիացիայի (NBA) համար իսկական «հումքային» բազա: 1937-ին վերաստեղծվում է Բասկետբոլի ազգային լիգան (NBL), սակայն շուտով սկսվում է համաշխարհային պատերազմը, և խաղացողների մեծ մասը զորակոչվում է: Իսկ պատերազմից հետո NBL-ին լուրջ մրցակից դարձավ մի նոր կազմակերպություն՝ Ամերիկայի բասկետբոլի ասոցիացիան (BAA): Սկզբում այն կազմված էր 11 ակումբներից: Առաջնությունը կազմակերպված էր այնքան հստակ, իսկ նրա նկատմամբ հետաքրքրությունն այնքան մեծ էր, որ BBA զանգվածային կերպով սկսեցին տեղափոխվել NBL-ի լավագույն խաղացողները, և ի վերջո այդ լիգան դադարեց գոյություն ունենալուց:

Այդ պահից ԱՄՆ-ում մնաց միայն մեկ կազմակերպություն, որն սկսեց միավորել բոլոր պրոֆեսիոնալ թիմերը: Որոշ ժամանակ անց լիգան փոխեց իր անվանումը՝ կոչվելով NBA (Բասկետբոլի ազգային ասոցիացիա), որն այժմ հայտնի է ամբողջ աշխարհում: 1997. ԱՄՆ-ում NBA-ի օրինակով կազմակերպվեց Բասկետբոլի կանանց ասոցիացիա (WNBA):

ԿԱՀԱՎՈՐԱՆՔԸ

Խաղը անց է կացվում խաղահրապարակում, որը ներկայացնում է իրենից ուղղանկյուն 28x15մ, 26 x 14. (նկ. 1):



Խաղահրապարակը բաժանվում է երկու կիսադաշտերի կենտրոնական գծի միջոցով: Խաղահրապարակի կենտրոնում կա շրջան 1.8 մետր շառավիղով: Յուրաքանչյուր օղակի մոտ կա այսպես կոչված տուգանային նետումների հրապարակ /3 վրկ. հրապարակ/, դրա երկարությունն է 5.8 մետր, իսկ լայնությունը 6 և 3.6 մետր: Եթե հարձակվող թիմի խաղացողը գտնվի այդ հրապարակում 3 վայրկյանից ավելի, ապա մրցավարը արձանագրում է խաղի կանոնների խախտում: Յուրաքանչյուր օղակից 6.75 մետր շառավղով /օղակի կենտրոնից հաշված/ անցկացվում է կիսաշրջանագիծ: Այդ գծից դուրս նետած գնդակները հաշվվում են 3 միավոր: Ավելի մոտ տարածությունից նետած գնդակները հաշվվում են 2 միավոր: Խաղահրապարակի երկու կողմերում դրված են վահաններ և օղակներ:



Վահանի չափերն են /նկ. 2/ 1.8 x 1.2 մետր, իսկ ներքևի անկյունը հատակից 2.75 մետր բարձրության վրա է: Խաղը անցկացվում է գնդաձև գնդակով, որի քաշը տատանվում է 567-650 գրամ, շրջագիծը համապատասխան 74.9-78 սանտիմետր:

ԽԱՂԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Յուրաքանչյուր խաղացող վերնաշապիկի վրա պետք է ունենա համապատասխան համարներ կրծքին և մեջքին, որոնք կլինեն միագույն, արտահայտիչ և կհամապատասխանեն վերնաշապիկին:

Համարները պետք է լինեն ընդարձակ և տեսանելի.

- մեջքի համարը ամենաքիչը պետք է լինի 20 սմ բարձրությամբ.
- կրծքի համարը՝ ամենաքիչը 10 սմ բարձրությամբ.
- համարները պետք է գրված լինեն 2 սմ-ից ոչ պակաս լայնությամբ.
- թիմում օգտագործվող համարները պետք է լինեն 4-ից մինչև 15-ը.

- թիմի խաղացողները նույն համարը կրելու իրավունք չունեն.
- ցանկացած գովազդային անվանում խաղային համարից պետք է հեռու լինի ոչ պակաս 5 սմ-ով:

Խաղի կամ խաղափուլի սկիզբը և ավարտը

Առաջին խաղափուլը սկսվում է, երբ մարզահրապարակի կենտրոնում նստած գնդակը ճիշտ է հետ մղվում խաղացողի կողմից:

Բոլոր մնացած խաղափուլերը սկսում է այն թիմը, որը խաղասկզբին չի կարողացել ճիշտ տիրապետել գնդակին: Եվ այսպես հաջորդականությամբ:

Խաղը չի կարող սկսվել, եթե թիմերից որևէ մեկը մարզահրապարակում չունի խաղին պատրաստ 5 /հինգ/ խաղացող:

Խաղային ընթացակարգ

Այն երկու մարզիկները, որոնք պետք է սկսեն խաղը, կանգնում են կենտրոնական գծի այն կիսաշրջանի ներսում, որը գտնվում է դեպի իրենց օղակը, տեղակայելով հրման ոտքը կենտրոնական գծին մոտ, իսկ մյուս ոտքը պարտադիր պետք է լինի կիսաշրջանի մեջ:

Նույն թիմի խաղացողները չեն կարող տեղակայվել իրար մոտ, եթե մրցակիցը ցանկանում է զբաղեցնել այդ տեղերից որևէ մեկը:

Մրցավարը գնդակը նետում է ուղղահայաց դեպի վեր, այնպիսի բարձրությամբ, որ 2 մրցակիցներն էլ չեն կարողանա այդքան ցատկել:

Խաղացողի նետման գործընթացը

Նետում խաղից կամ տուգանային նետում:
Կատարվում է, երբ գնդակը գտնվում է մարզիկի ձեռքում կամ ձեռքերում, որից հետո կատարվում է նետում օդով դեպի մրցակցի օղակը:

Հետ մղում՝ երբ ձեռքով կամ ձեռքերով գնդակը ուղղորդվում է դեպի մրցակցի օղակը:

Վերևից գրավում՝ երբ գնդակին ուժով ստիպում են մտնել վերևից մրցակցի օղակը 1 կամ 2 ձեռքով:

Հետ մղումը և գրավումը վերևից դիտվում է, որպես նետում խաղից:

Նետման գործընթացը

Սկսում է, երբ խաղացողը սկսում է նորմալ շարժում, որին հաջորդում է գնդակի բաց թողումը, և մրցավարի կարծիքով մարզիկը սկսել է օղակի գրավման՝ նետման փորձը:

Ավարտվում է, երբ գնդակը պոկվում է մարզիկի ձեռքից, կամ ձեռքերից, իսկ ցատկով նետման ժամանակ, երբ 2 ոտքերը հպվում են հատակին:

Օղակն ընկած գնդակը և միավորները

Գնդակը զամբյուղի մեջ է մտնում վերևից և մնում է նրա մեջ կամ անցնում է զամբյուղի միջով՝ համարվում է ընկած:

Երբ գնդակի աննշան մասը գտնվում է օղակի սահմաններում և օղակի վերին մասից ցած՝ համարվում է օղակի մեջ:

Ինչպես ներկայացված է ստորև, միավոր հաշվվում է ի օգուտ այն թիմին, որը հարձակվելով օղակի վար՝ գրավել է այն:

- Տուգանային նետման օղակի մեկ գրավումը համարվում է մեկ /1/ միավոր:

Ընդմիջում

Յուրաքանչյուր րոպեանոց ընդմիջումը պետք է տևի մեկ /1/ րոպե.

Երկու, մեկ րոպեանոց ընդմիջումը կարող է տրամադրվել յուրաքանչյուր թիմին, ցանկացած ժամանակ, խաղի առաջին խաղակեսում, երեք մեկ րոպեանոց ընդմիջումները կարելի է վերցնել 2-րդ խաղակեսում և յուրաքանչյուր լրացուցիչ քառորդում:

Չօգտագործված յուրաքանչյուր ընդմիջում չի կարելի տեղափոխել հաջորդ խաղակես կամ լրացուցիչ ժամանակ:

Մեկ բոպեանոց ընդմիջումները գրանցվում է այն թիմի օգտին, որի մարզիչը առաջինն է ցանկացել այն, եթե միայն մեկ բոպեանոց ընդմիջումը չի տրամադրվել մրցակցի գցած գնդակից հետո և առանց տուգանքի արձանագրման:

Բացառություն

Տուգանք տրվում է տուգանային նետումների միջև: Այդ դեպքում տուգանային նետումները պետք է իրացվեն, և մեկ բոպեանոց ընդմիջումը պետք է տրվի հաջորդ խաղի կանոնների խախտումից առաջ:

Տուգանք տրվում է գնդակի /դաշտում/ «կենդանի» դառնալուց առաջ, վերջին կամ միակ տուգանային նետումից հետո: Այդ դեպքում բոպեանոց ընդմիջումը տրվում է նոր տուգանքի կատարումից առաջ:

Գնդակի վարում

Գնդակի վարումը կատարվում է մեկ ձեռքով կամ փոփոխաբար՝ աջ կամ ձախ ձեռքերով: Խաղացողը կարող է վարել գնդակը խաղահրապարակի հատակին, այդ ձևով շարժման մեջ դնել այն: Վարման ժամանակ գնդակը պետք է փոփոխաբար դիպչի խաղահրապարակին:

Կանգնած դիրքից վարումից առաջ, խաղացողը սկզբում պետք է բաց թողնի գնդակը ձեռքերից, որից հետո միայն կարող է հիմնական ոտքը պոկել հատակից:

Համարվում է, որ խաղացողը դադարեցնում է վարումը այն ժամանակ, երբ երկու ձեռքերով միաժամանակ դիպչում է գնդակին:

Կրկին վարել գնդակը խաղացողը իրավունք չունի: Մրցավարը այդ դեպքում կազդարարի կանոնների խախտում:

Կանգնած դիրքից խաղացողը կարող է կատարել շարժումը միայն մեկ ոտքով, երկրորդ ոտքը չպետք է շարժի տեղից: Եթե խաղացողը մրցակից պաշտպանի հակագործողությունների արդյունքում չի կարողանում գնդակը նետել, փոխանցել կամ վարել և գնդակը պահում է ձեռքերում 5 վարկյանից ավելի՝ այն տալիս են մրցակից թիմին:

ԲԱՍԿԵՏԲՈԼԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1920-ական թվականներին ստեղծված ամերիկյան որբանոցների օտարերկրյա դաստիարակները և զինվորականները ազատ ժամերին զբաղվել են բասկետբոլ խաղով: Այդ որբանոցներից մեկում գոյությունը պահպանած՝ հայ երիտասարդներ Մուշեղ Մամիկոնյանը և Արամ Ալանակյանը սիրելով ու հետաքրքրվելով խաղի վերաբերյալ, Հայաստանում դարձան բասկետբոլի տարածման առաջին նախաձեռնողները:

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո, ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացման հարցերը դրվեց պետական մակարդակի վրա, մտցվեց կրթական համակարգի պարտադիր ուսուցման ծրագրի օղակներում:

Բասկետբոլը մասսայականացնելու նպատակով 1925-1926թթ. Գյումրիի «ԽՈՐԱՐԾԱՌ» և Երևանի «26-ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ» այգիներում ստեղծվեցին առաջին բասկետբոլային մարզահրապարակները:

1926թ. առաջին անգամ ք. Գյումրիի «ԽՈՐԱՐԾԱՌ» ակումբային թիմի բասկետբոլիստները առաջին անգամ Բաքվում մասնակցեցին մրցումներին:
1929թ. կազմակերպված պիոներական առաջին հավաքում, Երևանի ցուցադրական դպրոցը իրավունք նվաճեց մասնակցելու համամիութենական պիոներական հավաքի մրցումներին:

1930-ական թվականներին Գյումրիում կազմավորվեց կանանց բասկետբոլի թիմը, որը իրավունք ստացավ մասնակցելու Անդրկովկասի երկաթուղայինների առաջնության մրցումներին և գրավեց մրցանակային 2-րդ տեղը:

1939թ. «ԿԱՌՈՒՑՈՂ» մարզական ակումբի թիմը արժանացավ Հայաստանի չեմպիոնի կոչմանը: Հետագայում ստեղծվեցին տարբեր կամավոր մարզական ընկերություններ «ԴԻՆԱՄՈ», «ԻՍԿՐԱ», «ԼՈԿՈՄՈՏԻՎ», «ՍՊԱՐՏԱԿ», «ԱՇԽԱՏԱՆՔ», «ՄԵԴԻԿ» և այլն, որոնց բաստկետբոլային թիմերը համալրվեցին երիտասարդ բաստկետբոլիստներով:

Մասնագիտական կադրերի պահանջից ելնելով, 1930թ. ստեղծվեց ֆիզկուլտուրայի տեխնիկումը, իսկ 1940թ. Հայկական ուսուցչական ինստիտուտին կից գործեց նաև ֆիզիկական դաստիարակության ֆակուլտետը:

1945թ. հիմնավորվեց ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը, որի շրջանավարտները լրացնում են կրթական համակարգի բոլոր

օղակների պահանջները: Ինստիտուտի առաջին շրջանավարտներն են եղել Ն. Հովհաննիսյանը և Սպ. Ծառուկյանը, որոնք մինչ օրս դասավանդում են մարզախաղերի ամբիոնում:

Հետագայում բասկետբոլը գիտական հիմունքի վրա դնելու նպատակով Կ. Մանուկյանը, Ե. Դավթյանը, Ս. Ծառուկյանը պաշտպանեցին ատենախոսությունը և ստացան մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Հայաստանի բասկետբոլը համամիութենական ճանաչում ստացավ 1946թ. երբ Երևանի «ԴԻՆԱՄՈ» մարզական ընկերության տղամարդկանց և կանանց հավաքական թիմերը նվաճեցին մասնակցելու նախքին ԽՍՀՄ բասկետբոլի առաջնության մրցումներին:

Սկսած 1946-1991թթ. ՀՀ բասկետբոլիստները անընդմեջ մասնակցեցին միութենական մրցումներին, որտեղ հանդես էին գալիս «ՖԻՄԱ»-ի տղամարդկանց, «ՍՊԱՐՏԱԿ»-ի կանանց, հետագայում «ՀԱՏԻՍ»-ի բասկետբոլային թիմերը:

1952թ. Երևանում մեկնարկվեց ԽՍՀՄ բասկետբոլի հերթական առաջնությունը, որում «ՖԻՄԱ»-ի տղամարդկանց հավաքական թիմը գրավեց 8-րդ տեղը /Կ. Մանուկյան, Ա. Ալաչաչյան, Ռ. Մարգարյան, Ս. Ծառուկյան և ուրիշներ, մարզիչ՝ Կ. Վարդանյան/:

1954թ. բասկետբոլի կանանց համամիութենական մրցումներում Երևանի «ՄԵԴԻԿ» հավաքականի թիմը գրավեց 9-րդ տեղը /Ջ. Ամյան, Ն. Հովհաննիսյան, Ջ. Իսրայելյան, Ա. Թորոսյան և ուրիշներ, մարզիչ՝ Ա. Օգանով/:

1975-1976թթ. «ՖԻՄԱ»-ի տղամարդկանց բասկետբոլի հավաքականը իրավունք ստացավ մասնակցելու ԽՍՀՄ բասկետբոլի բարձրագույն խմբի առաջնության մրցումներին /Վ. Զաստուխով, Է. Հարությունյան, Ա. Թուխիկյան, Ե. Դավթյան, Ա. Նշանյան, Հ. Ամիրխանյան և ուրիշներ մարզիչներ՝ Կ. Վարդանյան, Կ. Մանուկյան, Ռ. Մարգարյան/:

1985թ. Աբովյանի «ՀԱՏԻՍ» բասկետբոլի կանանց հավաքական թիմը, իրավունք նվաճեց մասնակցելու ԽՍՀՄ բասկետբոլի բարձրագույն խմբի առաջնության մրցումներին, իսկ 1988թ. դարձավ ԽՍՀՄ գավաթի գավաթակիր /Ա. Սարգսյան, Ա. Հակոբյան, Լ. Վորոնենկո, Լ.Ալեքսանդրովա և ուրիշներ. մարզիչ՝ Ռ. Չոլախյան, Է. Հարությունյան/:

1956-1983թթ. ՀՀ տղամարդկանց և կանանց բասկետբոլի հավաքական թիմերը անընդմեջ մասնակցել են 1-8-րդ ԽՍՀՄ ժողովուրդների սպարտակիադաներին:

ԽՍՀՄ փլուզումից հետո վերակառուցվեց աշխատանքները նաև բասկետբոլի ոլորտում: Ստեղծվեցին նոր մարզաակումբներ՝ Երևանի «ՈՒՐԱՐՏՈՒ», «ԳՐԱՆԴ ակումբ», Արարատի «ԱՎԱՌԱՅՐ», Մեծամորի «ԱՏՈՄԱՍ», Գյումրիի «ԱՐԱԳԱԾ» և այլն: Բավականին աշխուժացել և ընդլայնվել է ՀՀ բասկետբոլի ֆեդերացիայի գործունեությունը, որի ուժերով պարբերաբար անցկացվում են տարբեր տարիքային մրցումներ, մրցաշարեր, ՀՀ բասկետբոլի առաջնություն, ՀՀ Ֆեդերացիայի գավաթի միջազգային մրցաշար և այլն:

Այսօր, աշխարհի տարբեր երկրների բասկետբոլի ակումբային թիմերում հանդես են գալիս հայ բասկետբոլիստներ՝ Ա. Հայկոբյանը, Լ. Ալեքսանդրովան /Ֆրանսիա/, Լ. Ավագյանը, Վ. Խաչատրյանը, Հ. Սայադյանը, Ա. Հովհաննիսյանը, Տ. Գյոքչյանը և ուրիշներ, մարզիչ Ե. Դավթյանը /Լիբանան/:

ՀԱՅ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՑԻ ԱՆՎԱՆԻ ՄԱՐԶԻԿՆԵՐ, ՄԱՐԶԻՉՆԵՐ, ՄՐՑԱՎԱՐՆԵՐ

Բասկետբոլի ազգային և միջազգային ասպարեզում մեծ ներդրում են ունեցել հայ և հայաստանցի անվանի մարզիկներ, մարզիչներ, մրցավարներ, որոնց անունը ոսկյա տառերով հիշատակվում է համաշխարհային բասկետբոլի պատմության էջերում:

1. ***ԱԼԱՉԱՀՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ*** – ԽՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետ: Ռուսաստանի վաստակավոր մարզիչ: Խաղացել է Երևանի «ՖԻՄԱ», Ալմա-Աթայի «ԲՈՒՐԵՎԵՍՏՆԻԿ», Մոսկվայի «ԲԿՄԱ» ակումբների հավաքական թիմերում: 1956թ. ԽՍՀՄ ժողովուրդների սպարտակիադայի մասնակից /Ղազախստան/: 1959 և 1963թթ. ԽՍՀՄ ժողովուրդների սպարտակիադայի չեմպիոն /Մոսկվայի հավաքական/: 1967թ. ԽՍՀՄ ժողովուրդների սպարտակիադայի 3-րդ մրցանակակիր /Մոսկվայի հավաքական/: 1959, 1960, 1961, 1962, 1963, 1964, 1965, 1966թթ. ԽՍՀՄ առաջնության չեմպիոն /Մոսկվայի «ԲԿՄԱ»/: 1953թ. երիտասարդների միջև միջազգային ընկերական խաղերի հաղթող: 1960թ. ԽՍՀՄ վարպետ թիմերի մրցաշարի հաղթող /Մոսկվայի «ԲԿՄԱ»/: 1953, 1961, 1963, 1965թթ. Եվրոպայի առաջնության քառակի չեմպիոն /ԽՍՀՄ

հավաքական/: 1964թ. Տոկիոյի Օլիմպիական խաղերի երկրորդ մրցանակակիր /ԽՍՀՄ հավաքական/: ԽՍՀՄ բասկետբոլի տղամարդկանց հավաքական թիմի մարզիչ: 1966թ. Հայրենական բասկետբոլի միջազգային մրցաշարի հաղթող: 1967թ. ԽՍՀՄ ժողովուրդների սպարտակիադայի 3-րդ մրցանակակիր /Մոսկվայի հավաքական/: Մոսկվայի «ԲԿՄԱ» ակումբի տղամարդկանց հավաքական թիմի մարզիչ՝ 1969թ. ԽՍՀՄ առաջնության չեմպիոն: Հայաստանի, Ռուսաստանի, Ղազախստանի և ԽՍՀՄ տղամարդկանց հավաքական թիմերի ուժեղագույն խաղացող: Ապրում է Կանադայում:

2. ***ԱԼԱՆԱԿՅԱՆ ԱՐԱՄ*** – Հայաստանում բասկետբոլի տարածման նախաձեռնող: ՀՀ ֆիզկուլտուրայի և սպորտի վաստակավոր գործիչ: ՀՀ վաստակավոր մարզիչ:

3. ***ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎԱ ԼՅՈՒԲՈՎ*** – ԽՍՀՄ միջազգային կարգի սպորտի վարպետ: Խաղացել է Երևանի «ԶԵՆԻՏ», Աբովյանի «ՀԱՏԻՍ» ակումբների հավաքական թիմերում: ԽՍՀՄ առաջին և բարձրագույն խմբերի առաջնության մասնակից: ԽՍՀՄ կանանց հավաքական թիմի խաղացող: 1987թ. Եվրոպայի առաջնության չեմպիոն /ԽՍՀՄ հավաքական/: 1988թ. ԽՍՀՄ գավաթի խաղարկության գավաթագիր /Աբովյանի «ՀԱՏԻՍ»/: Համամիութենական և միջազգային պաշտոնական մրցաշարերի մասնակից և հաղթող: 1990թ. Լ. Ռոնկետիի գավաթի խաղարկության ընտրական խաղերի մասնակից: Հայաստանի և ԽՍՀՄ հավաքական թիմերի խաղացող և չեմպիոն: Խաղում է Ֆրանսիայի ակումբներից մեկի բասկետբոլի թիմում:

4. ***ԱՐԱԲԱՋՅԱՆ ԱՐՏԵՆԻԿ*** – Միջազգային կարգի մրցավար: 1946-1953թթ. խաղացել է Սոֆիայի «ՍՊԱՐՏԱԿ ԼԵՎՍԿԻ» բասկետբոլի ակումբի հավաքական թիմում: Բուլղարիայի քառակի չեմպիոն: Որպես մրցավար անցկացրել է մի շարք ընկերական, միջազգային մրցումներ և մրցաշարեր, Եվրոպայի ու աշխարհի, առաջնության ընտրական խաղեր:

5. ***ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԺՈՐԱ*** – Միջազգային կարգի մրցավար: ՀՀ վաստակավոր մարզիչ: ՀՀ բասկետբոլի ֆեդերացիայի փոխնախագահ: Որպես մրցավար անցկացրել է մի շարք ընկերական և պաշտոնական մրցաշարեր՝ Հայաստան – Իսլանդիա, Հայաստան- Կանադա, Հայաստան – Լոս-Անջելոս, ԽՍՀՄ առաջնության խաղեր: Աշխատում է Երևանում, ՀՀ ֆիզկուլտուրայի, սպորտի և երիտասարդական հարցերի վարչությունում:

6. ***ԲՈՒՆԱԹՅԱՆ ԷԼԵՆ*** – ԽՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետ: Խաղացել է Աբովյանի «ՀԱՏԻՍ» և «Մոսկվայի «ԲԿՄԱ» ակումբների հավաքական թիմերում: ԽՍՀՄ առաջին և բարձրագույն խմբերի առաջնության մասնակից: 1988, 1989, 1990, 1991, 1992թթ. ԽՍՀՄ առաջնության մրցանակակիր և չեմպիոն /Մոսկվայի «ԲԿՄԱ»/: 1995թ. Եվրոպայի չեմպիոն /ԽՍՀՄ Հավաքական/: 1996թ. Բարսելոնի Օլիմպիական խաղերի չեմպիոն /ԽՍՀՄ հավաքական/: Միջազգային, համամիութենական մրցաշարերի հաղթող: Հայաստանի, Ռուսաստանի, ԽՍՀՄ հավաքական թիմերի խաղացող: Խաղում է Մոսկվայի «ԲԿՄԱ» բասկետբոլի կանանց ակումբի հավաքական թիմում:

7. ***ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՈՀԱՐ*** – ԽՍՀՄ սպորտի վարպետ: Խաղացել է Թբիլիսիի «ԳՊԻ», «ՆԱՈՒԿԱ» ակումբների և Երևանի «ՍՊԱՐՏԱԿ» ԿՄԸ բասկետբոլի հավաքական թիմերում: ԽՍՀՄ առաջին խմբի առաջնության մասնակից: 1956, 1959, 1963թթ. ԽՍՀՄ ժողովուրդների սպարտակիադաների մասնակից /Վրաստանի հավաքական/: 1967թ. ԽՍՀՄ ժողովուրդների սպարտակիադայի մասնակից /Հայաստանի հավաքական/: 1965թ. Համաշխարհային ուսանողական խաղերի չեմպիոն /ԽՍՀՄ հավաքական/: ԽՍՀՄ երիտասարդական հավաքականի Հայաստանի և Վրաստանի հավաքական թիմերի խաղացող: Աշխատում է Երևանում, որպես ավագ մարզիչ:

8. ***ԴԱՎԹՅԱՆ ԴԱՎԻԹ*** – Միջազգային կարգի մրցավար: Երևանի «ՍՊԱՐՏԱԿ» կանանց հավաքական թիմի մարզիչ: Որպես մրցավար անցկացրել է մի շարք միջազգային ընկերական և պաշտոնական մրցաշարեր, ԽՍՀՄ ժողովուրդների սպարտակիադաների խաղեր, ԽՍՀՄ առաջին և բարձրագույն խմբերի առաջնության խաղեր, Եվրոպայի և աշխարհի առաջնության խաղեր: Ապրում է ԱՄՆ-ում:

9. ***ԴԱՎԹՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ*** – ԽՍՀՄ վաստակավոր մարզիչ: Մարզել է «ՍՊԱՐՏԱԿ» Երևանի բասկետբոլի կանանց հավաքական թիմը: 1963, 1967, 1971, 1975թթ. ԽՍՀՄ ժողովուրդների սպարտակիադաների ՀՀ կանանց բասկետբոլի հավաքական թիմի մարզիչ:

10. ***ԴՅԱՉԵՆԿՈ ՆԻԿՈԼԱՅ*** – ԽՍՀՄ միջազգային կարգի սպորտի վարպետ: Խաղացել է Երևանի «ՖԻՄԱ» և Մոսկվայի «ԲԿՄԱ» ակումբների հավաքական թիմերում: ԽՍՀՄ առաջին և բարձրագույն խմբերի առաջնության մասնակից: 1967, 1971, 1975թթ. ԽՍՀՄ ժողովուրդների սպարտակիադաների մասնակից /Հայաստանի հավաքական/, 1979թ. /Մոսկվայի հավաքական/: 1968թ. բասկետբոլի միջազգային

մրցաշարի հաղթող /ԽՍՀՄ երիտասարդական հավաքական/: 1973, 1974, 1976թթ. ԽՍՀՄ բասկետբոլի տղամարդկանց առաջնության եռակի չեմպիոն: 1973թ. ԽՍՀՄ գավաթի խաղարկության գավաթակիր /Մոսկվայի «ԲԿՄԱ»/: 1973թ. Եվրոպայի առաջնության 3-րդ մրցանակակիր: Հայաստանի, Ռուսաստանի, ԽՍՀՄ հավաքական թիմերի ուժեղագույն խաղացող: Աշխատում է Մոսկվայում, որպես ավագ մարզիչ:

11. ***ՋԱՍՏՈՒԽՈՎ ՎԻՏԱԼԻ*** - ԽՍՀՄ միջազգային կարգի սպորտի վարպետ: ՀՀ վաստակավոր մարզիչ: Խաղացել է Երևանի «ՍՊԱՐՏԱԿ», Մոսկվայի «ԴԻՆԱՄՈ» ԿՄԸ և Երևանի «ՖԻՄԱ» ակումբի հավաքական թիմերում: ԽՍՀՄ առաջին և բարձրագույն խմբերի առաջնության մասնակից: 1967, 1971, 1975, 1979թթ. ԽՍՀՄ ժողովուրդների սպարտակիադաների մասնակից /Հայաստանի հավաքական/: ԽՍՀՄ երիտասարդական և տղամարդկանց հավաքական թիմերի խաղացող: 1966թ. երիտասարդների միջև Եվրոպայի առաջնության չեմպիոն /ԽՍՀՄ հավաքական/: 1969թ. Եվրոպայի առաջնության չեմպիոն: 1970թ. աշխարհի առաջնության 3-րդ մրցանակակիր: 1976թ. Յու. Գագարինի հուշամրցաշարի հաղթող: 1977թ. ակումբային թիմերի միջցամաքային գավաթի /Ռ.Ջոնսի/ 2-րդ մրցանակակիր: 1976թ. Հայրենական բասկետբոլի մրցաշարի հաղթող: Հայաստանի և ԽՍՀՄ հավաքական թիմերի խաղացող: Մոսկվայի «ԴԻՆԱՄՈ» մարզական ակումբի ուժեղագույն խաղացող: Երևանի «ՖԻՄԱ», «ՈՒՐԱՐՏՈՒ», Մեծամորի «ԱՏՈՄԱՍ» ակումբային թիմերի մարզիչ: Աշխատել է Աղվանստանում և Պարսկաստանում, որպես ակումբային և բասկետբոլի տղամարդկանց ազգային հավաքական թիմերի ավագ մարզիչ: Մարզում է Մեծամորի «ԱՏՈՄԱՍ» բասկետբոլի տղամարդկանց ակումբային թիմը:

12. ***ԹՈՒԽԻԿԱՅՆ ԱՇՈՏ*** – ԽՍՀՄ սպորտի վարպետ: Խաղացել է Երևանի «ՖԻՄԱ» ակումբի հավաքական թիմում: ԽՍՀՄ առաջին և բարձրագույն խմբերի առաջնության մասնակից: 1975թ. 1979թ. 1983թ. ԽՍՀՄ ժողովուրդների սպարտակիադաների մասնակից /Հայաստանի հավաքական/: ԽՍՀՄ հավաքական թիմի խաղացող: 1977թ. Բուլղարիայում անցկացվող Ունիվերսիադայի մասնակից /ԽՍՀՄ հավաքական/: Հայաստանի բազմակի չեմպիոն: Խաղացել է Բեյրութի «ԱՆԴՐԱՆԻԿ» հայկական ակումբի հավաքական թիմում: Ապրում է ք. Երևանում:

13. ***ՀԱԿՈՊՈՎ ԳԱՐՈՒՆ*** – Միջազգային կարգի մրցավար: Վրաստանի վաստակավոր մարզիչ: 1944-1949թթ. խաղացել է Թբիլիսիի «ԼՈԿՈՄՈՏԻՎ» ակումբային

թիմում: ԽՍՀՄ առաջնության մասնակից: Որպես մրցավար անցկացրել է մի շարք համամիութենական, միջազգային պաշտոնական մրցաշարեր, որոնց թվում սոցիալիստական երկրների «ԴԻՆԱՄՈ»-ական թիմերի միջև երկու պաշտոնական մրցաշար:

14. ***ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍՈՒՐԵՆ*** - ԽՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետ: Խաղացել է Թբիլիսիի «ԿԱՌՈՒՑՈՂ», «ՍՏ» ակումբների, Թբիլիսիի «ԴԻՆԱՄՈ» ԿՄԸ հավաքական թիմերում: 1944-946թթ. ԽՍՀՄ առաջնության չեմպիոն: 1945թ. ԽՍՀՄ առաջնության 2-րդ մրցանակակիր: Միութոնական, ընկերական մրցաշարերի մասնակից և հաղթող: Վրաստանի և ԽՍՀՄ տղամարդկանց հավաքական թիմի խաղացող:

15. ***ՄԱՄԻԿՈՆՅԱՆ ՍՈՒՇԵՂ*** - Հայաստանում բասկետբոլի տարածման նախաձեռնող: ՀՀ ֆիզկուլտուրայի և սպորտի վաստակավոր գործիչ: ՀՀ վաստակավոր մարզիչ: 1956թ. ԽՍՀՄ ժողովուրդների սպարտակիադայի ՀՀ բասկետբոլի տղամարդկանց հավաքական թիմի մարզիչ: Աշխատել է ֆիզկուլտուրայի ինստիտուտում, որպես մարզախաղերի ամբիոնի վարիչ՝ դոցենտ:

16. ***ՄԱՆՈՒԿՅԱՆ ԿԱՌԼԵՆ*** - ԽՍՀՄ սպորտի պատվավոր վարպետ: ՀՀ վաստակավոր մարզիչ: Մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր: Խաղացել է «ՖԻՄԱ», Կիևի «ԲՄԱ», «ԿԱՌՈՒՑՈՂ» ակումբների հավաքական թիմերում: ԽՍՀՄ առաջնության մասնակից: 1956թ. /Հայաստանի հավաքական/, 1963թ. /Ուկրաինայի հավաքական/ ԽՍՀՄ ժողովուրդների սպարտակիադաների մասնակից: ԽՍՀՄ երիտասարդական և տղամարդկանց հավաքական թիմերի խաղացող: Համամիութենական, միջազգային մրցաշարերի մասնակից և հաղթող: 1971թ. /կանայք/, 1979, 1983թթ. /տղամարդիկ/ ԽՍՀՄ ժողովուրդների սպարտակիադաներում ՀՀ հավաքական թիմերի մարզիչ: Մարզում է Երևանի «ՖԻՄԱ» տղամարդկանց և Հայաստանի հավաքական թիմերը: Աշխատում է ֆիզկուլտուրայի ինստիտուտում, որպես մանկավարժական ֆակուլտետի դեկան:

17. ***ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌԱՖԻԿ*** – ԽՍԿՄ սպորտի վարպետ: ՀՀ վաստակավոր մարզիչ: Խաղացել է Երևանի «ՖԻՄԱ» ակումբի հավաքական թիմում: ԽՍՀՄ առաջնության մասնակից: 1956, 1959, 1963 թթ. ԽՍՀՄ ժողովուրդների սպարտակիադաների մասնակից: ԽՍՀՄ երիտասարդական և տղամարդկանց հավաքական թիմերի խաղացող: 1967թ., 1971թ. 1975թ. /տղամարդիկ/, 1979թ. /կանայք/ ԽՍՀՄ ժողովուրդների

սպարտակիադաներում ՀՀ հավաքական թիմերի մարզիչ: Մարզել է Երևանի «ՖԻՄԱ»-ի տղամարդկանց և Երևանի «ԶԵՆԻԹ» կանանց բասկետբոլի հավաքական թիմերը: Ապրում է ԱՄՆ-ում:

18. ***ՄԻՐԶՈՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ*** – ԽՍՀՄ վաստակավոր մարզիչ: ԽՍՀՄ սպորտի վարպետ: Խաղացել է Լենինգրադի «ԲՈՒՐԵՎԵՍՏՆԻԿ» ԿՄԸ հավաքական թիմում: ԽՍՀՄ առաջին խմբի առաջնության մասնակից: Համամիութենական մրցաշարերի մասնակից և հաղթող: Լենինգրադի «ԲՈՒՐԵՎԵՍՏՆԻԿ» ԿՄԸ հավաքական թիմի ավագ մարզիչ: ԽՍՀՄ պատանիների հավաքական թիմի մարզիչ: Ապրում է Սանկտ-Պետերբուրգում:

19. ***ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՋԵՄՄԱ*** – ԽՍՀՄ սպորտի վարպետ: Խաղացել է Երևանի «ՖԻՄԱ» ակումբի և «ՍՊԱՐՏԱԿ» ԿՄԸ հավաքական թիմերում: ԽՍՀՄ առաջին խմբի առաջնության մասնակից: 1956թ. 1963թ. 1967թ. ԽՍՀՄ ժողովուրդների սպարտակիադաների մասնակից /Հայաստանի հավաքական/: ԽՍՀՄ երիտասարդական և կանանց հավաքական թիմի խաղացող: Համամիութենական և միջազգային մրցաշարերի հաղթող: 1967թ. ԽՍՀՄ ժողովուրդների սպարտակիադայում ՀՀ կանանց հավաքական թիմի մարզիչ: Ապրում է Երևանում:

20. ***ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ՄԱԹԵՎՈՍ*** - ԽՍՀՄ սպորտի վարպետ: Միջազգային կարգի մրցավար: Խաղացել է Երևանի «ՖԻՄԱ» և Ֆրունզեի «ԱԼԳԱ» ակումբների հավաքական թիմերում: ԽՍՀՄ առաջին և բարձրագույն խմբերի առաջնության մասնակից: ԽՍՀՄ ժողովուրդների սպարտակիադայի մասնակից /Հայաստանի հավաքական/: Որպես մրցավար անցկացրել է հանրապետական և ԽՍՀՄ առաջնության մրցումներ, միջազգային մրցաշարեր: Ապրում է Ալմա-Աթայում:

21. ***ՉՈԼԱԽՅԱՆ ՌԱՖԻԿ*** – ԽՍՀՄ սպորտի վարպետ: ՀՀ վաստակավոր մարզիչ: Խաղացել է Երևանի «ՖԻՄԱ», Լենինականի «ԱՇԽԱՏԱՆՔ» ակումբային թիմերում: Մարզել է Լենինգրադի «ԲՈՒՐԵՎԵՍՏՆԻԿ», Լենինականի «ԱՇԽԱՏԱՆՔ», Երևանի «ԶԵՆԻՏ», Աբովյանի «ՀԱՏԻՍ» կանանց բասկետբոլի հավաքական թիմերը: 1975թ. 1979թ. 1983թ. ԽՍՀՄ ժողովուրդների սպարտակիադաներում Հայաստանի բասկետբոլի կանանց հավաքական թիմի մարզիչ: 1988թ. ԽՍՀՄ գավաթի խաղարկության գավաթակիր /Աբովյանի «ՀԱՏԻՍ»/: ԽՍՀՄ երիտասարդական հավաքական թիմի մարզիչ: Աշխատել

է Կամպուչիի, Բուլղարիայի, Հորդանանի, Սիրիայի բասկետբոլի ակումբային թմերում, որպես մարզիչ: Ապրում է Երևանում:

22. ***ՄԱՐԳՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ*** – ԽՍՀՄ միջազգային կարգի սպորտի վարպետ: Խաղացել է Երևանի «ՍՊԱՐՏԱԿ», Մոսկվայի «ՍՊԱՐՏԱԿ» ԿՄԸ, Երևանի «ՕՆՏ», «ԶԵՆԻՏ», Աբովյանի «ՀԱՏԻՍ» ակումբների հավաքական թիմերում: ԽՍՀՄ առաջին և բարձրագույն խմբերի առաջնության մասնակից: 1975, 1983թթ. ԽՍՀՄ ժողովուրդների սպարտակիադաների մասնակից /Հայաստանի հավաքական/: 1976թ. 16-17 տարեկան աղջիկների միջև Եվրոպայի առաջնության չեմպիոն /ԽՍՀՄ հավաքական/: 1979թ. 18-19 տարեկան պատանեկան առաջնության չեմպիոն: /ԽՍՀՄ հավաքական/: 1981թ. Ունիվերսիադայի չեմպիոն /ԽՍՀՄ հավաքական/: ԽՍՀՄ բասկետբոլի հավաքական թիմի ուժեղագույն խաղացող: 1988թ. ԽՍՀՄ գավաթի խաղարկության գավաթակիր /Աբովյանի «ՀԱՏԻՍ»/: ԽՍՀՄ, Հայաստանի, Ռուսաստանի բասկետբոլի կանանց հավաքական թիմերի խողացող: Ապրում է Երևանում:

23. ***ՍՊԱՆԴԱՐՅԱՆ ՍՏԵՓԱՆ*** - ԽՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետ: ԽՍՀՄ վասկատավոր մարզիչ: Խաղացել է Մոսկվայի «ԿԻՄ» ակումբի և «ԴԻՆԱՄՈ» ԿՄԸ հավաքական թիմերում: ԽՍՀՄ առաջնության մասնակից: 1937թ. ԽՍՀՄ բասկետբոլի տղամարդկանց առաջնության չեմպիոն: 1938թ. ԽՍՀՄ քաղաքների մրցաշարի հաղթող: Մոսկվայի հավաքական թիմի խաղացող: Մոսկվայի «ԴԻՆԱՄՈ» տղամարդկանց և կանանց հավաքական թիմերի ավագ մարզիչ՝ /տղամարդիկ/ 1947թ. ԽՍՀՄ քաղաքների մրցաշարի հաղթող, 1948թ. ակումբային թիմերի առաջնության հաղթող /կանայք/ 1949թ. ԽՍՀՄ գավաթի խաղարկության գավաթակիր: ԽՍՀՄ տղամարդկանց հավաքական թիմի մարզիչ՝ 1956թ. 1958թ. Մայրանոի գավաթի խաղարկության մրցանակակիր՝ 1952, 1956, 1960 թթ. Օլիմպիական խաղերի երկրորդ մրցանակակիր: 1947թ. 1951թ. 1957թ. 1959թ. 1961թ. Եվրոպայի առաջնության չեմպիոն: 1959թ. աշխարհի առաջնության մասնակից: 1949թ. 1951թ. Համաշխարհային ուսանողական խաղերի չեմպիոն: 1965-1966թթ. Չիլիի տղամարդկանց ազգային հավաքական թիմի մարզիչ:

24. ***ՎԱՐԴԱՆՅԱՆ ԿՈՆՍՏԱՆՏԻՆ*** - ՀՀ ֆիզկուլտուրայի և սպորտի վաստակավոր գործիչ: ՀՀ վաստակավոր մարզիչ: Դոցենտ: Մինչև 1950թ. խաղացել է Երևանի «ԿԱՌՈՒՑՈՂ» ակումբի հավաքական թիմում: Երկար տարիներ մարզել է Երևանի «ՖԻՄԱ» բասկետբոլի տղամարդկանց հավաքական թիմը՝ ԽՍՀՄ առաջին և

բարձրագույն խմբերի առաջնության մասնակից: ՀՀ բասկետբոլի տղամարդկանց հավաքական թիմի մարզիչ: 1956, 1971, 1975, 1979թթ. ԽՍՀՄ ժողովուրդների սպարտակիադաների ՀՀ բասկետբոլի տղամարդկանց հավաքական թիմի մարզիչ: Աշխատել է Երևանի ֆիզկուլտուրայի ինստիտուտում որպես դեկան:

25. ***ՕԳԱՆՈՎ ԱԼԵՔՍԱՆԴՐ*** – ՀՀ ֆիզկուլտուրայի և սպորտի վաստակավոր գործիչ: ՀՀ վաստակավոր մարզիչ: Դոցենտ: Մարզել է Երևանի «ՄԵԴԻԿ» բասկետբոլի կանանց հավաքական թիմը: 1959թ. ԽՍՀՄ ժողովուրդների սպարտակիադայի ՀՀ բասկետբոլի տղամարդկանց հավաքական թիմի մարզիչ: Աշխատել է Երևանի ֆիզկուլտուրայի ինստիտուտում որպես մարզախաղերի ամբիոնի վարիչ, ֆակուլտետի դեկան:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Բասկետբոլը դպրոցում ֆիկիկական կուլտուրա առարկայի ամենասիրված և արդի թեմաներից է: Այն ուսուցանվում է 5-րդ դասարանից մինչև ուսումնառության ավարտը: Բասկետբոլի տարածման, ավելի զարգացման, խաղի դիտարժանության և արդյունավետության բարելավման համար բասկետբոլի ֆեդերացիան փոփոխում է խաղի կանոնները, ավելի մատչելի և պարզ դարձնում, իսկ Հայաստանի բասկտբլի ֆեդերացիան իր հիմնական գործառույթն է համարում աշակերտների և մարզիկների ոչ միայն առողջության պահպանումն ու համակողմանի ներդաշնակ զարգացումը, այլ նաև խաղի մասայականացումն ու բովանդակալից, հետաքրքիր և բարձրակարգ միջոցառումների կազմակերպումը:

Հայաստանում շատ է կարևորվում բազմավաստակ մարզիկների, մարզիչների, ուսուցիչների վաստակի պահպանումը, զարգացումն ու տարածումը:

Հետազոտական աշխատանքի արդյունքում ես եկա այն եզրահանգմանը, որ բասկետբոլը՝ լինելով թիմային մարզաձև, աշակերտների մոտ ձևավորում է արժեքային համակարգի համար կարևոր անձնային հատկանիշներ՝ ընկերասիրություն, փոխօգնություն, հարգանք մեկը մյուսի հանդեպ, սեր, արդարամտություն: Բասկետբոլն ունի դաստիարակչական մեծ նշանակություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հ. Մելքոնյան «Մարզախաղեր» 2008թ.
2. Ե. Դավթյան «Բասկետբոլ» 2003թ.
3. Ֆ. Ղազարյան «Սպորտային մարզման տեսություն» 1982թ.
4. Յու. Պորտնով «Բասկետբոլ» 1998թ.